ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ԶՈՒ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI : 10.24234/journalforarmenianstudies.v2i73.253

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են ենթարկվել արևմտյան ռազմակրթական դպրոցների ավանդույթները, ներկայացվել են ծագման շարժառիթները, կերպափոխությունները, հաջողությունների հիմնական գրավականները:

Զուգահեռներ են անցկացվել եվրոպական առաջադեմ երկրների և ամերիկյան ռազմակրթական համակարգի հետ՝ վեր հանելով առանձնահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված ԱՄՆ սպայակազմի և Կոնգրեսի միջև երկարամյա պայքարին Սառը պատերազմի տարիներին: Շարունակելով շարադրանքը՝ մեկնաբանվում են մերօրյա ռազմական գործողությունների պարադոքսները՝ սպայակազմի կրթական մակարդակի և ծրագրերի հետ կապված:

Հիմնվելով վեր հանված արդյունքների վրա՝ հեղինակը քննարկում է ՀՀ ռազմական կրթության հիմնահարցերը ՀՀ ԶՈՒ կերպափոխման հայեցակարգի համատեքստում: նորագույն տեխնոլոգիաների և սպառազինության ձեռքբերման հետ մեկտեղ կարևորվում են բազմակողմանի զարգացած և կրթված սպայական կազմի պատրաստումը՝ հիմնված միջգիտակարգային ռազմական գիտության, ոչ շաբլոնային ու միատեսակ ռազմարվեստի և ճկուն ու ադապտիվ կրթական ծրագրերի վրա:

Բանալի բառեր և արտահայտություններ. *զինված ուժերի կերպափոխում, ռազմական կրթություն, ռազմակրթական դպրոցներ, չորրորդ արդյունաբերական հեղափոխություն, պատերազմավարում, բազմատիրույթ գործողություններ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի ճշմարտություն է, որ բանակի ողնաշարը սպայական կազմն է, իսկ պրոֆեսիոնալ սպաներ պատրաստելու համար ըստ էության հարկավոր է ունենալ հզոր ռազմակրթական համակարգ: Գրագետ, նպատակասլաց, աշխատասեր սպայական կազմը, որոնք ճիշտ որոշումներով ու կառավարմամբ օր օրի հզորացնում են բանակի մարտունակությունը պատրաստվում են երկար ու ծանր կրթական գործընթացի ընթացքում: Սակայն ռազմակրթական համակարգը, որն ինքնին մի բարդ համակարգ է, նախևառաջ առնչվում է ընդհանուր կրթական համակարգին, քանզի չի կարող մի երկրում զարգանալ ռազմական կրթությունը, եթե ընդհանուր կրթությունը ցածր մակարդակի վրա է: Այսօր ամբողջ աշխարհն անցնում է կրթական խոր փոփոխությունների ուղիով:

Մի կողմից կրթության դերը նվազել է. մարդիկ ուզում են «դիպլոմ» ունենալ և չեն մտածում կրթության մասին, այլևս այդքան հեղինակավոր չեն կրթված մարդիկ, դասավանդողների հեղինակությունն անկում է ապրում ամբողջ աշ-խարհում: Մյուս կողմից՝ տեղեկատվությունն ավելի հասանելի է, և չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը պահանջում է տաղանդավորների ու կրթվածների մեծ զանգված (Шваб К., 2019):

Այս իրողությունը պահանջում է կրթության վերաիմաստավորում. դասական կրթական մեթոդները, կրթական ծրագրերն ու ձևերը իրենց տեղը զիջում են ինքնակրթությանը, ոչ ավանդական կրթական ձևերին, անընդհատ կրթվելու եղանակներին, ճկուն կրթական հաստատություններին և այլն: Ոչ ֆորմալ, էլեկտրոնային կրթական հարթակները այսօր շատ արդիական են: Այսօր յուրաքանչյուր մարդ կարող է կրթվել ինքնուրույն:

Որակյալ սպաներ ունենալու համար պետք է ունենալ արդիական կրթական համակարգ նորարարական լուծումներով, համարձակ նորամուծություններով, հեռու հին ու շաբլոնային մոտեցումներից:

Գիտակրթական մակարդակը ուղիղ կապ ունի պետության քաղաքական ինստիտուտների, մոդելի, բարեկեցության, հզորության, տնտեսության և բոլոր մյուս ոլորտների հետ: Նույն կերպ էլ պետության գիտակրթական մակարդակը ծնում է համապատասխան ռազմակրթական համակարգ: Ինչպիսի քաղաքական

ինստիտուտներ որ ունի պետությունը, այնպիսին էլ ռազմակրթական համակարգն է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռազմակրթական ուսումնասիրությունները թեմատիկ առումով լայն ընդգրկվածություն ունեն: Դրանք հավասարապես պատմական, աշխարհագրական, բանասիրական, աղբյուրագիտական արժեք ունեն: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, համադրական-վերլուծական և զուգադրական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ռազմակրթական համակարգը որպես երևույթ

Ռազմական գործում դարեր ի վեր մարտիկի ու հրամանատարի հմտությունները, մասնագիտական կարողությունները առավել շատ կենտրոնանում էին քաջության և ֆիզիկական մարզվածության վրա: Ասքերում ու առասպելներում անգամ բացառապես գովերգվում էր քաջ զինվորն ու ֆիզիկապես հզոր մարտիկը, իսկ մտքի զորության մասին ոչ մի խոսք, կամ այդպիսի մարտիկը համարվում էր զուտ խորամանկ:

Ֆրանսիայում 1748 թ. հիմնադրվեց Թագավորական Մեզյերի ռազմական, իսկ 1756 թ.՝ Լա Ֆարի հրետանային դպրոցը: 1751 թ. հիմնադրվեց Փարիզի ռազմական հրամանատարական դպրոցը, որը տեխնիկական չէր, սակայն կրթությունը մեջ տեխնիկական մասը բավականին խորն էր **(Preston A., 1988; Converse, E. III, 1998)**: Փաստացի ռազմարվեստում սկիզբ էր դրվում ռազմական մասնագիտացված բարձր կրթությանը, ինչը հենց գիտության ճանապարհն էր:

Միաժամանակ ֆրանսիական այս դպրոցներում դեռ խոր արմատավորված էր ազնվականության դերը, որը չէր թողնում, որ կրթությունը դրվի ամուր հիմքերի վրա: Վերջիններս համարում էին, որ ռազմական գործում քաջությունը ամենակարևորն է, և այն կրթվելով չի ձևավորվում: Բացի դրանից, այստեղ ի սկզբանե կար մի հակասություն, որը չկա քաղաքացիական կրթության մեջ: Ռազմական կրթությունը ենթադրում է զանգվածային կրթություն, և շրջանավարտները հիմնականում ստանում են հավասար կամ մոտիկ պաշտոններ, ինչը որակ-քանակ հակասության համար բարդագույն հարցերից է **(Bond B., 1972)**: Քաղաքացիական ոլորտում այդպես չէ. այնտեղ որակը չի

հակադրվում քանակի հետ կամ ավելի քիչ է հակադրվում: Շրջանավարտները, ըստ իրենց ունակությունների, կարող են աշխատանք գտնել:

Այս իրադարձությունների դարաշրջանում գերմանական միտքը ցրված էր, հախուռն ու անկազմակերպ: Գերմանական իդեան միասնական պետությունն էր, սակայն տարաձայնությունները բզկտում էին ողջ ազգային ներուժը: Սկզբունքորեն գերմանական մտքի վերելքի նոր փուլ դարձավ գերմանացի դասականների՝ Իմանուիլ Կանտի, Յոհան Ֆիխտեի, Ֆրիդրիխ Շելինգի, Գեորգ Հեգելի, Լյուդվիգ Ֆոյերբախի, Յոհան Գյոթեի ստեղծագործական գործունեությունը (18-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դար):

Նրանց հետ փիլիսոփայություն մտան պատմության թեմաներն իրենց հերոսական և ոչ հերոսական դրվագներով, դրանց զարգացումը, ճանաչող սուբյեկտի ակտիվությունը: Գերմանական մշակույթի վերելքի տարիներն էին: Այս ամենը սկիզբ դրեց գերմանական սպայական բարձր դասի գաղափարական հարստացման և այդ սպայական կազմի, պահանջատիրության ու իղձերի համար (**Деметр К., 2007**): Այստեղ ոչ երկրորդական դեր խաղաց նաև կրոնը: Գերմանիայում արդեն ամրապնդվում էր Լյութերականությունը, որը, թոթափելով Կաթոլիկ Հռոմի լուծը, ավելի ազատ միտք էր գեներացնում: Դարեր շարունակ գերմանական էլիտայի, պետությունների ու ազգի պառակտված լինելը, որպես արդյունք՝ տարբեր երկրների ազդեցության ներքո մնալը, պատերազմները և վերջին դարում ազատական գաղափարական փոփոխություններն առաջացրել էին վրեժի, պատվախնդրության, միասնականության ձգտումների խորքային ընկալումներ և քայլեր: Ինչպես նշում է ֆելդմարշալ Ալբերտ Քեսսելրինգը, «Այն ժամանակ, երբ ամբողջական ազգեր հարյուրամյակներով փորձում էին նվաճել ամբողջ աշխարհը, գերմանացիները պատերազմում էին սեփական սահմանների ներսում և ամեն ինչի հետ կորցնում հեռանկարը, ապագան տեսնելու կարողությունը» (**Кессельринг А., 1957**): Պրուսական ռազմական դպրոցը, որն ավելի ազնվական էր, ավելի կարծր էր իր արժեքների մեջ, ավելի սպարտայական էր, դեռ հիմնականում կաթոլիկ էր, չուներ բուրժուական զարգացած խավ, դեռ չէր ընդունում այդ ամենը (**Деметр К., 2007**):

1806 թ. Յենայի ճակատամարտում պարտվելուց հետո Պրուսական կաբինետն արագ որոշում կայացրեց ռազմական ակադեմիա հիմնելու մասին: Սակայն այս

ակադեմիան լրիվ այլ սկզբունքներով և շատ առաջադիմական էր կառուցվում (**Preston A., 1988**): Այս ռազմական ակադեմիան, որը հաճախ էր անվանափոխվում, որի ղեկավարումը ևս հաճախ փոփոխվում էր, իրականում մեծ հետք է թողել ռազմարվեստի զարգացման գործում: Այստեղ ընդունվելու համար սպաները կարող էին պատրաստվել մոտ 4 տարի, քննությունները հաղթահարում էին դիմորդների մոտ կեսը, իսկ կրթության մի մասը ներառում էր քաղաքացիական առարկաներ, շաբաթը մոտ 20 ժամ դասախոսություն այլ գիտակարգերից (**Millotat C. O. E., 1992**): Հիմնականում ուսումնասիրում էին ինչպես հումանիտար, այնպես էլ ճշգրիտ առարկաներ, որոնց դասախոսները երկրի լավագույն մասնագետներն էին: Այս ակադեմիայի հեղինակությունն ավելի բարձր էր քան իր իրական մակարդակը: Բարձր հեղինակությունն ավելի շատ երկրի առաջավոր դասախոսների շնորհիվ էր, և ստեղծվել էր մի մեծ միֆ այս ակադեմիայի մասին, ինչը ամեն դեպքում հեղափոխական եղավ ողջ աշխարհի համար (**Preston A., 1988**):

Մոտավորապես կես դարի պայքարից հետո ի վերջո ներգերմանական պայքարում հաղթեց Շարնհորսթի, Գնեյզենաուի ու Բոյենի դպրոցը, որտեղ սպան պետք է լիներ նախ գրագետ, իսկ ազնվական դասին պատկանելը դեռ երաշխիք չէր լավ սպա լինելու համար: Կրթությունը դժվարությամբ, բայց իր ճանապարհը հաղթահարում էր:

Ֆ. Նիցշեն սիրում էր ասել գերմանական սպաների մասին. «Մարդիկ, որոնք կարողանում են լինել լուռ ու համարձակ, մարդիկ, որոնք կարողանում են միայնակության մեջ լինել աննկատ ու ինքնաբավ, մշտական» (**Пихт В., 1957**): Ահա այսպիսի ազդեցություն ու փոխադարձ կապ կար գերմանական սպայական կազմի և համաշխարհային մակարդակի առաջադեմ գերմանական մտավորականության մեջ: Այս ժամանակ աշխարհում տպագրվող ռազմական գրքերի ու հոդվածների մեծ մասը գերմաներեն էր: Կարծում ենք, որ փիլիսոփաների ու մտավորականների այս սերունդը ծնեց գերմանական փայլուն սպայական կազմ, որն էլ ստեղծեց հզոր բանակ և որպես արդյունք՝ միասնական Գերմանիա: Յուրաքանչյուր հաղթանակից հետո այդ կարծիքն ավելի էր ամրապնդվում:

Գերմանիայում ձևավորվել էր քաղաքացիական վերահսկողության յուրահատուկ համակարգ, որը ճիշտ է բրիտանա-ամերիկյան մակարդակ չուներ,

սակայն բավականին բարձր էր և յուրահատուկ (**Հանթինգթոն U., 2020**)։ Գերմանական սպայական կազմն ուներ միայն մեկ երազանք՝ միասնական Գերմանիա, սակայն նրանց կրթական մակարդակը, մտահորիզոնը թույլ տալիս էր հասկանալ, թե ինչքան վտանգավոր է մեկից ավելի հակառակորդների հետ միաժամանակյա պատերազմը։ Այդ պատճառով նրանք, որքան էլ ահեղ ու ռազմատենչ էին թվում, սակայն իրականում շատ զգույշ էին։ Հասարակության մեջ գերմանացի սպաները ունեին բացարձակ հարգանք (**Rosinski H., 1939**)։ Գերմանական ռազմակրթական համակարգը, որը որպես այդպիսին ինքնաբավ առաջին լիարժեք համակարգն էր աշխարհում, պատրաստում էր համակողմանի զարգացած սպայական կազմի։ Այս կրթական համակարգում սպաները ստանում էին միջգիտակարգային հիմնարար կրթություն, որը բավարարում էր արդյունաբերականացման տվյալ մակարդակին։

Այդ համակարգի երկարամյա բարեփոխումների կենսունակության և արդյունավետության գնահատման համար իրականացված հետազոտությունները (**Трунов Ф. О., 2022**) վկայում են, որ.

Վերափոխման փուլը	Տևողությունը (ժամկետները)	Նշումներ
1.	Շուրջ 3 տարի (1756-1759 թթ.)	Դե ֆակտո մինչև Կունեսդորֆի ջախջախում։ Երկրի ղեկավարության շրջանում տարածված պատրանք էր, որ այս տևողությունը բավականին երկար է, ինչն իրականում ամբողջովին ապացուցվեց 1806 թ.։
2.	Ավելի քան 35 տարի (1814-1859 թթ.)	Փաստացի տևողությունն առավել երկար է՝ հաշվի առնելով, որ այս վերափոխումը մեծ ազդեցություն է գործել հաջորդի վրա։
3.	Գրեթե 50 տարի (1866-1915 թթ.)	Թույլ տվեց հաղթել Ֆրանս-պրուսական պատերազմում՝ «կորցնելով» իր կենսունակությունը Առաջին համաշխարհային պատերազմի դիրքային և խրամատային փուլին անցնելու ժամանակ, ինչն խորհրդանշում էր որոշակի հավասարություն Քառյակ միության և Անտանտի երկրների շրջանում։

4.	2 տարուց պակաս (1941-1942 թթ.)	Երկրորդ համաշխարհային պատերազմի բեկումնային ժամանակաշրջանից սկսած՝ (1942 նոյեմբեր-1943 դեկտեմբեր) այս վերափոխումը սկսեց իրեն սպառել, մինչդեռ վերափոխման իրականցման արագությունը շեշտակի աճել էր:
5.	35 տարուց ավել (1963-1990 թթ.)	Փաստացի նշված ժամկետից առավել, որովհետև արդյունքները կիրառվել են նաև Գերմանիայի վերամիավորումից հետո:
6.	Շուրջ 3-5 տարի (2012/2013-2017/2018 թթ.)	Մի կողմից՝ արդյունքները սահմանափակված էին կարճ ժամանակահատվածով, մյուս կողմից՝ դրանք հիմք դարձան նոր վերափոխումների համար:
7.	Արդեն 4 տարի (2022 թ.-ցայսօր)	Ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով սկսված վերափոխումները ավարտի չեն հասցվել, և ամբողջական չափելի չէ դրանց արդյունավետությունը:

Դպրոցների համեմատությունը

Գերմանական սպայական կազմի այս սերնդի կրթության ողնաշարը միևնույնն է գաղափարական կրթությունն էր հումանիտար հիմքով, որին անհրաժեշտ չափով ավելացված էին բնագիտական գիտելիքները: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմը ցույց տվեց, որ ռազմակրթական համակարգում բնագիտականի ավելացման կարիք կա. աշխարհը չափազանց տեխնոլոգիական էր դարձել, իսկ ռազմագործողությունների մասշտաբներն այնքան էին մեծացել, որ մաթեմատիկական չափումները ամեն մի հարցում էին: Այս իրողությունը ռազմական կրթության հիմնահարցերից մեկն է, որը մշտապես ակտուալ է: Սա պահանջում էր նաև, որ բարձր սպայակազմը ոչ միայն բնագիտական ավելի մեծ գիտելիքներ ունենա, այլ նաև հումանիտար գիտակարգերն ավելի խորն ու լայն ուսումնասիրի, ողջ պետության անվտանգության համակարգերը հասկանա: Ռազմական կրթությունը դառնում էր ավելի միջգիտակարգային:

Այս իրողություններին ու փոփոխություններին առաջինը արձագանքեց բրիտանական համակարգը, որը 1927 թ. Լոնդոնում հիմնադրեց առաջին ոչ զուտ ռազմական այլ ավելի խորքային, անվտանգային ռազմակրթական կառույցը. այն կոչվում էր Կայսերական պաշտպանական քոլեջ /Imperial Defence College «IDC»/ **(Masland J., Radway L., 1957)**: Ընդ որում, դրանից երեք տարի առաջ Մեծ Բրիտանիայում հիմնադրվել էր արդյունաբերական նման քոլեջ /Army Industrial College «AIC»/, որտեղ կրթում էին պետության տնտեսական ներուժը ռազմական դրության ժամանակ կառավարելու հմտությունները **(Masland J., Radway L., 1957)**: Այսպիսով՝ բրիտանական քաղաքական միտքը պատերազմի ռազմավարական համակողմանի գործոնների ուսումնասիրությունը դրեց ավելի խորքային, միջգիտակարգային հիմքերի վրա **(Stewart A., 2018)**: Այս քայլը ռազմագիտական չափորոշիչների ձևավորման հարցում համարվում է առանցքային: Փաստացի Մեծ Բրիտանիան առաջինը ֆիքսեց, որ ռազմարվեստն ավելի շատ միջգիտակարգային գիտություն է և լավ մաթեմատիկայի ու ֆիզիկայի իմացությունը դեռ չի նշանակում, որ ռազմարվեստում ամեն ինչ գծային է ու կոնստանտ: Ի վերջո, քանի որ ռազմական ոլորտը ենթարկվում է քաղաքական ոլորտին, ապա բրիտանական ժողովրդավարական համակարգը ռազմակրթական ոլորտում և ռազմական համակարգի կառուցվածքում եկավ ավելի ազատական, ավելի համակարգային, քաղաքացիական վերահսկողության համար ավելի վերահսկելի համակարգ: Իսկ այդ ամենը նշանակում էր, որ ռազմական կրթությունը պետք է լինի միջգիտակարգային ու համակողմանի. այն չի կարող լինել զուտ ռազմական:

Հետագայում այս մոտեցումը տարածվեց ողջ աշխարհում, քանի որ Երկրորդ համաշխարհային պատերազմը ըստ էության հենց նման խորքային գիտելիքների կրող ռազմավարներ էր պահանջում **(Van Creveld M., 1990)**: Սակայն գերմանական դպրոցը դեռ մի փոքր կաղում էր այս հարցում, իսկ գերմանականի հիմքով ստեղծված ռուսական դպրոցն առհասարակ շեղվեց դեպի բնագիտական ուղղություն:

Հեղինակներից շատերը, ուսումնասիրելով գերմանական սպայական կորպուսը, սխալմամբ գալիս են այն եզրակացության, որ գերմանական

միլիտարիզմը հենց սպայական կազմից է սկսվել և այն նույնականացնում են ճապոնական միլիտարիզմի հետ: Դա այդքան էլ այդպես չէ: Ճապոնիայում, որտեղ 1868 թ. Մեյձիի ռեստավրացիայից հետո փաստացի լրիվ այլ պետություն ստեղծվեց, սինտոիզմն ու բուսիդոն դրվեցին երկրի բոլոր փաստաթղթերում՝ սահմանադրությունից մինչև մանկապարտերզների դաստիարակչական ծրագրեր **(Balet J., 1910; Maki J., 1945)**: Ճապոնիան չնայած որ չուներ զարգացած ռազմակրթական համակարգ, սպայական կայացած կորպուս, ուներ միասնական ռազմատենչ հասարակություն և ի վերջո գերկարգապահ ռազմականացված պետություն էր, որտեղ բանակի նկատմամբ քաղաքական վերահսկողություն չկար և լինել չէր կարող: Ուղիղ հակառակն էր **(Vagts A., 1937)**: Ճապոնական պետության, ազգի ու բանակի համար դա էր ազգային միակ գաղափարախոսությունը: Գերմանիայիում ռազմատենչության առավելապաշտությամբ տոգորված էին ավելի շատ քաղաքական գործիչները, քան զինվորականները:

Շարունակելի…[1]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից ռազմակրթական համակարգը պետք է ապահովի հետևյալ չափորոշիչները՝

1. բազմակողմանի զարգացած և կրթված սպայական կազմ,
2. միջգիտակարգային ռազմական գիտություն,
3. ոչ շաբլոնային ու միատեսակ ռազմարվեստ,
4. ճկուն ու ադապտիվ կրթական ծրագրեր:

Միայն այս չափորոշիչներով կրթված սպաները կարող են ռազմարվեստին վերաբերվել որպես բազմաճյուղ գիտության, մարտերն ու օպերացիաները պլանավորել ստեղծագործ մոտեցմամբ, լինել համարձակ ու խելացի, հասարակության մեջ ունենալ մեծ հարգանք, ռազմական և քաղաքացիական

[1] Հոդվածի շարունակությունը կհրատարակվի «Հայագիտական հանդես» ամսագրի առաջիկա համարում:

արդյունաբերության հետ լինել հաղորդ ու ներդաշնակ, մասնակցել նորարարություններին ու գյուտերին:

Հայաստանի Հանրապետությունն այսօր բոլոր ռիսկերով հանդերձ հայտնվել է մի բարենպաստ իրավիճակում, երբ աշխարհում գերակայող են դառնում գաղափարներն ու գիտելիքները, հումքային մոդելը մերժվում է, առաջ են գալիս նոր գիտատարր ճյուղեր, որոնց վրա էլ հիմնվում է նոր՝ չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը: Ինչպես նշեցինք, այստեղ ամենամեծ հարստությունը մարդն է, ստեղծարար, զարգացած, տաղանդավոր մարդը: Այսինքն՝ հայ ժողովուրդն ստացել է իր պատմական անցյալին, հոգեկերտվածքին, մտածելակերպին ու արժեհամակարգին հարմար զարգացման հնարավորություն, որը պետք է ճիշտ օգտագործի: Հայ սպան, եթե չգիտակցեց ինչ է արհեստական բանականությունը, քվանտային մտածողությունն ու տեխնոլոգիաները, չտիրապետեց լեզուների, նանոբիոտեխնոլոգիաների հետ ծանոթ չեղավ, ապա չի կարող լինել լավ սպա, չի կարող կատարել իր խնդիրը:

Մենք այստեղ ՀՀ իրականության համար առաջ քաշեցինք սպայական կրթության բարեփոխման մարտահրավերների հիմնահարցերից մեկը, որն այսօր աշխարհում լայնորեն քննարկվում է մասնագետների շրջանում **(Libel T., 2021)**: Առաջադեմ սպայական կրթությունը մեր ԶՈՒ-երի հզորության լավագույն երաշխիքն է: Հայ սպան պետք է լինի բազմակողմանի զարգացած, գաղափարապես ամուր տեխնոկրատ և լավ առաջնորդ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հանթինգթոն Ս. (2020)**, Զինվորը և պետությունը, Երևան, «Լիմուշ» հրատ.:
2. **Деметр К. (2007)**, Германский офицерский корпус в обществе и государстве. 1650-1945, Москва, “Центрполиграф”.
3. **Кессельринг А. (1957)**, Война в бассейне средиземного моря, Итоги Второй Мировой Войны, Москва, Издательство иностранной литературы.

4. **Пихт В. (1957)**, Немецкий солдат, Итоги Второй Мировой Войны, Москва, **«Итоги второй мировой войны»**, сборник статей, изданный в издательстве «Иностранная литература».
5. **Трунов Ф. (2022)**, Германская модель военных реформ, Москва, https://inion.ru/site/assets/files/6804/2022_mon_germanskaia_model_1.pdf#:~:text=%D0%A2%D1%80%D1%83%D0%BD%D0%BE%D0%B2%2C%20%D0%A4.%D0%9E.,ISBN%20978%2D5%2D248%2D01008%2D0
6. **Шваб К. (2019)**, Четвертая промышленная революция, Москва, “Эксмо”.
7. **Balet J. (1910),** Military Japan, The Japanese Army and Navy In 1910. “Yokohama”.
8. **Bond B. (1972)**, The Victorian Army and the Staff College 1854-1914. London, Eyre Methuen.
9. **Converse E. III (1998)** (Ed.) Forging the sword: Selecting, educating, and training cadets and junior officers in the modern world. Chicago: Imprint Publications.
10. **Maki J. (1945)**, Japanese Militarism: Its Cause and Cure. New York.
11. **Masland J., Radway L. (1957)**, Soldiers and Scholars: Military Education and National Policy. Princeton: Princeton University Press.
12. **Millotat C. O. E. (1992)**, Understanding the Prussian-German General Staff System. Carlisle Barracks: U. S. Army War College, Strategic Studies Institute.
13. **Preston A. (1988)**, Perspectives in the History of Military Education and Professionalism. In Borowski, H. (Ed.), The Harmon Memorial Lectures in Military History, 1959–1987: a collection of the first thirty Harmon lectures given at the United States Air Force Academy. Washington, DC: Office of Air Force History, United States Air Force.
14. **Rosinski H. (1939)**, The German Army, London.
15. **Stewart A. (2018)**, “Necessarily of an experimental character”: The interwar_ period and the Imperial Defence College. In D. E. Delaney, R. C. Engen & M. Fitzpatrick (Eds.), Military Education and the British Empire, 1815–1949, Vancouver: UBC Press.

16. **Vagts A. (1937)**, A History of Militarism, New York.
17. **Van Creveld M. (1990)**, The Training of Officers: From Military Professionalism to Irrelevance, New York, Free Press.

REFERENCES

1. **Huntington S. (2020),** Zinvory' & petowt'yowny' /Soldier and the state/, Yerevan, “Limowsh”.
2. **Demetr K. (2007),** Germanskiy ofitserskiy korpus v obshchestve i gosudarstve. 1650-1945 /The German Officer-Corps in Society and State, 1650-1945/, Moscow, “Tsentrpoligraf”.
3. **Kesselring A. (1957)**, Voyna v basseyne sredizemnogo morya /War in the Mediterranean basin, Results of the Second World War/, Moscow, Publishing house of foreign literature.
4. **Pikht V. (1957)**, German soldier, Results of the Second World War, Moscow, published by Foreign Literature Publishing House.
5. **Trunov F. O. (2022)**, German model of military reforms, Moscow, https://inion.ru/site/assets/files/6804/2022_mon_germanskaia_model_1.pdf#:~:text=%D0%A2%D1%80%D1%83%D0%BD%D0%BE%D0%B2%2C%20%D0%A4.%D0%9E.,ISBN%20978%2D5%2D248%2D01008%2D0
6. **Shvab K. (2019)**, The Fourth Industrial Revolution, Moscow, “Eksmo”.
7. **Balet J. (1910),** Military Japan: The Japanese Army and Navy In 1910. Yokohama.
8. **Bond B. (1972)**, The Victorian Army and the Staff College 1854-1914. London: Eyre Methuen.
9. **Converse E. III (1998)** (Ed.) Forging the sword: Selecting, educating, and training cadets and junior officers in the modern world. Chicago: Imprint Publications.
10. **Maki J. (1945)**, Japanese Militarism: Its Cause and Cure. New York.
11. **Masland J., Radway L. (1957)**, Soldiers and Scholars: Military Education and National Policy. Princeton: Princeton University Press.

12. **Millotat C. O. E. (1992)**, Understanding the Prussian-German General Staff System. Carlisle Barracks: U. S. Army War College, Strategic Studies Institute.
13. **Preston A. (1988)**, Perspectives in the History of Military Education and Professionalism. In Borowski, H. (Ed.), The Harmon Memorial Lectures in Military History, 1959–1987: a collection of the first thirty Harmon lectures given at the United States Air Force Academy. Washington, DC: Office of Air Force History, United States Air Force.
14. **Rosinski H. (1939)**, The German Army, London.
15. **Stewart A. (2018)**, "Necessarily of an experimental character": The interwar_ period and the Imperial Defence College. In D. E. Delaney, R. C. Engen & M. Fitzpatrick (Eds.), Military Education and the British Empire, 1815–1949, Vancouver: UBC Press.
16. **Vagts A. (1937)**, A History of Militarism, New York.
17. **Van Creveld M. (1990)**, The Training of Officers: From Military Professionalism to Irrelevance, New York, Free Press.

Арцрун Ованнисян

Фундаментальные вопросы армянского военного образования в контексте трансформации вооруженных сил РА

Заключение

Ключевые слова и выражения: *трансформация вооруженных сил, военное образование, военные школы, четвертая промышленная революция, ведение войны, многодоменные операции.*

В статье рассматриваются традиции западных военных учебных заведений, представлены мотивы их возникновения, трансформации и основные гарантии успеха.

Проводятся параллели с передовыми европейскими странами и американской системой военного образования, подчеркиваются их специфические особенности. Особое внимание уделяется давней борьбе между американскими военными и

Конгрессом во время холодной войны. Далее в статье комментируются парадоксы современных военных операций, связанные с уровнем образования и программами офицерского корпуса.

На основе полученных результатов автор обсуждает основные проблемы военного образования в Республике Армения в контексте концепции трансформации Вооруженных Сил Республики Армения. Наряду с приобретением новейших технологий и вооружений, подчеркивается необходимость подготовки всесторонне развитого и образованного офицерского корпуса на основе междисциплинарной военной науки, нестандартного и единого военного искусства, а также гибких и адаптивных образовательных программ.

Artsrun Hovhannisyan

Fundamental issues of Armenian military education in the context of the transformation of the RA Armed Forces

Conclusion

Key words and expressions: *transformation of armed forces, military education, military schools, the fourth industrial revolution, warfare, multi-domain operations.*

This article examines the traditions of Western military educational institutions, presenting the motives behind their emergence, transformation, and key guarantees of success.

Parallels are drawn with advanced European countries and the American military education system, highlighting their specific characteristics. Particular attention is paid to the long-running struggle between the US military and Congress during the Cold War. The article then comments on the paradoxes of modern military operations related to the level of education and programs of the officer corps.

Based on the findings, the author discusses the key challenges of military education in the Republic of Armenia in the context of the concept of transforming the Armed Forces of the Republic of Armenia. Along with the acquisition of the latest technologies and weapons, the need for a comprehensively developed and educated officer corps based

on interdisciplinary military science, a unique and unified military art, and flexible and adaptive educational programs is emphasized.

Արծրուն Հովհաննիսյան – ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի մարշալ Հ. Բաղրամյանի անվան հրամանատարաշտաբային ինստիտուտի պետ, գնդապետ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ ռազմարվեստի պատմության և տեսության հիմնախնդիրներ, բարդակազմ/բազմաշերտ պատերազմներ: Հեղինակ է տասնվեց մենագրության և շուրջ քառասուն հոդվածի: arcrunhovhannisyan@gmail.com

Artsrun Hovhannisyan –PHD, Associate Professor, colonel, Head of Marshal H. Baghramyan Command and stuff institute of V. Sargsyan Military academy of MOD RA. Scientific interests: History and theory of military art, compound/multi-layer warfare. arcrunhovhannisyan@gmail.com

Арцрун Ованнисян - Кандидат исторических наук, доцент, полковник, начальник командно-штабного института имени маршала И. Баграмяна Военной академии им. В. Саргсяна Министерства обороны Республики Армения. Научные интересы: история и теория военного искусства, комбинированная/многослойная войны. Автор шестнадцати монографий и около сорока статей. arcrunhovhannisyan@gmail.com.

Խմբագրություն է ուղարկվել 01.06.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 14.06.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.